# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ և ԿՈՄՈՒՆԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ժամանակահատված՝ 17.12.2021-03.05.2022թթ.



**ք.Երևան, 2022թ.**

թվականի համապատասխանաբար 2008 թվականի նոյեմբերի 1-ի և դեկտեմբերի 15-ի դրությամբ հաստատված ցուցակներում (այսուհետ՝ Հերթացուցակ) հաշվառված՝ Ծրագրի շրջանակներում շահառու ճանաչված կամ չճանաչված ընտանիքների փաթեթներ,

- Հերթացուցակում չհաշվառված և հաշառվելու իրավունքը դատական կարգով վերականգնած ընտանիքների փաթեթներ:

Փաստաթղթային փաթեթները դասավորվել են հետևյալ տրամաբանությամբ՝ փաթեթի սկզբում տեղ են գտել Որոշումների համաձայն համայնքներից ստացված փաստաթղային փաթեթներն, այնուհետև՝ փաթեթների համալրման նպատակով հավաքագրված լրացուցիչ (այդ թվում՝ թարմացված) փաստաթղթերը

Խմբավորվել են Ծրագրի կազմակերպմանը և իրականացմանն առնչվող գրությունները, հարցումները, ցուցակները և այլ փաստաթղթեր:

ՀՀ Լոռու մարզի քաղաքային և գյուղական բնակավայրերում բնակարանային պայմանների բարելավմանը հավակնող ընտանիքների փաստաթղթային փաթեթները և Ծրագրի իրականացմանն առնչվող այլ փաստաթղթեր նախապատրաստվել են արխիվացման համար, ստեղծվել են փաթեթներում առկա փաստաթղթերի ցանկը՝ յուրաքանչյուր փաթեթի համար ընձեռնելով տեղեկատու-որոնողական հնարավորություն:

Մասնավորապես, նշված տրամաբանությամբ արխիվացման համար նախապատրաստվել են՝

- ՀՀ Լոռու մարզի Սպիտակի քաղաքապետի կողմից 2008 թվականի նոյեմբերի 1-ի դրությամբ հաստատված Հերթացուցակում հաշվառված թվով 385 ընտանիքների փաստաթղթային փաթեթներ, Հերթացուցակում հաշվառվելու իրավունքը դատական կարգով վերականգնած թվով 3 ընտանիքների և ՀՀ կառավարության առանձին որոշմամբ բնակարան ստացած թվով 3 ընտանիքի փաստաթղթային փաթեթներ (ընդամենը՝ 391 փաթեթ),
- ՀՀ Լոռու մարզի Վանաձորի քաղաքապետի կողմից 2008 թվականի նոյեմբերի 1-ի դրությամբ հաստատված Հերթացուցակում հաշվառված թվով 19 ընտանիքների փաստաթղթային փաթեթներ,
- ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի քաղաքապետի կողմից 2008 թվականի նոյեմբերի 1-ի դրությամբ հաստատված Հերթացուցակում հաշվառված թվով 52 ընտանիքների փաստաթղթային փաթեթներ,

- ՀՀ Լոռու մարզի Գոգարան համայնքի ղեկավարի 2008 թվականի դեկտեմբերի 15-ի դրությամբ հաստատված Հերթացուցակում հաշվառված թվով 77 ընտանիքների և Հերթացուցակում հաշվառվելու իրավունքը դատական կարգով վերականգնած թվով 2 ընտանիքների փաստաթղթային փաթեթներ (ընդամենը՝ 79 փաթեթ):
- ՀՀ Լոռու մարզի Լուսաղբյուր համայնքի ղեկավարի կողմից 2008 թվականի դեկտեմբերի 15-ի դրությամբ հաստատված Հերթացուցակում հաշվառված թվով 45 ընտանիքների և Հերթացուցակում հաշվառվելու իրավունքը դատական կարգով վերականգնած թվով 3 ընտանիքների փաստաթղթային փաթեթներ (ընդամենը՝ 48 փաթեթ):
- ՀՀ Լոռու մարզի Արևաշող համայնքի ղեկավարի կողմից 2008 թվականի դեկտեմբերի 15-ի դրությամբ հաստատված Հերթացուցակում հաշվառված թվով 209 ընտանիքների և Հերթացուցակում հաշվառվելու իրավունքը դատական կարգով վերականգնած թվով 14 ընտանիքների փաստաթղթային փաթեթներ (ընդամենը՝ 223 փաթեթ):
- ՀՀ Լոռու մարզի Հարթագյուղ համայնքի ղեկավարի կողմից 2008 թվականի դեկտեմբերի 15-ի դրությամբ հաստատված Հերթացուցակում հաշվառված թվով 33 ընտանիքների և Հերթացուցակում հաշվառվելու իրավունքը դատական կարգով վերականգնած թվով 2 ընտանիքների փաստաթղթային փաթեթներ (ընդամենը՝ 35 փաթեթ):
- Վերը նշված յուրաքանչյուր համայնքի համար կազմվել է Ծրագրին առնչվող ընդհանուր փաստաթղթերի փաթեթներ՝ թվով 4 փաթեթ:

Յուրաքանչյուր ընտանիքի փաթեթ դասավորվել, կազմվել, ցանկավորվել և կարվել է առանձին թղթապանակի/արագակարի մեջ, որի դիմերեսին լրացվել են փաթեթի վերաբերյալ հիմնական հակիրճ տեղեկությունները: Նշված փաստաթղթերը սկանավորվել:

## ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հաշվետու ժամանակահատվածում արխիվացման համար նախապատրաստվել է ՀՀ Լոռու մարզի բնակավայրերի կտրվածքով թվով 851 փաստաթղթային փաթեթ, որից

847-ը՝ Ծրագրի շրջանակներում բնակարանային պայմանները բարելավելու հավակնող ընտանիքների, իսկ 4-ը՝ Ծրագրի իրականացմանն առնչվող փաստաթղթերի մասով (ամփոփ տեղեկանքը ներկայացված է ստորև):

| Բնակավայրը | Արխիվացման համար նախապատրաստված փաթեթների թիվը |
|---|---|
| ք.Սպիտակ | 391 |
| ք.Վանաձոր | 19 |
| ք.Ստեփանավան | 52 |
| գ.Գոգարան | 79 |
| գ.Լուսաղբյուր | 48 |
| գ.Արևաշող | 223 |
| գ.Հարթագյուղ | 35 |
| Ծրագրին իրականացմանն առնչվող | 4 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ՝** | **851** |

Արխիվացման համար նախապատրաստված բոլոր 851 փաթեթները սկանավորվել և պահվում են PDF ֆորմատով՝ էլեկտրոնային կրիչի վրա:

Բնակարանային ֆոնդի կառավարման
և կոմունալ ենթակառուցվածքների
վարչության փորձագետ

Օլգա ՄԱՐԳԱՐՅԱՆ

05.05.2022թ.